ԱՎ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԵՖԵՐ - ԲԵՐԼԻԿԸ, ԹԵՔԵԱԼԻՖԻ ՀԱՐՊԻԵՆ ԵՒ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ 1914-1915 ԹԹ.

1914 թ. հուլիսի 21-ին, Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց երկու օր անց (ըստ Լորդ Բրայսի եւ Ա. Դարբինյանի՝ 1 օր անց)[1] Թուրքիան, որը նախապես իր չեզոքությունն էր հայտարարել համաշխարհային պատերազմում, բայց միաժամանակ նախապատրաստվում էր պատերազմին, սուլթանական իրադեով, կայսրության բոլոր վայրերում անցկացրեց **սեֆեր-բերլիկ**[2]:

Ըստ սեֆեր-բերլիկի՝ Թուրքիայում զորակոչվեցին 20-45 տարեկան (ըստ Ռընե Բինոնի՝ 20-35 տարեկան[3], ըստ Լորդ Բրայսի՝ 21-45 տարեկան[4], ըստ Հ.Կոսոյանի՝ 25-45 տարեկան[5], ըստ Ա. Դարբինյանի՝ 24-45 տարեկան[6], ըստ Ա. Կեռրկիզյանի՝ 20-50 տարեկան[7]) ոչ միայն մահմեդական, այլեւ քրիստոնյա (հայ, ասորի, հույն) բոլոր տղամարդիկ, որոնք իրենց 1 տարվա զինվորական նախնական ծառայությունն անց էին կացնելու իրենց հայրենիքում: Ինչպես ժամանակի մամուլն է նշում, կառավարության որոշմամբ, «մինչեւ եօթ օր 20-45 տարեկան թէ՛ մահմեդական, թէ՛ քրիստոնյա զինուորագրելու են»[8]:

Օ. Մխիթարյանի դիտարկմամբ, հայ գյուղացիների տգիտության եւ թուրքական զորահավաք ոստիկանների բռնության հետեւանքով, իրականում խաբեությամբ զինվորագրվում էին 17-50 տարեկանները[9]:

Միաժամանակ, ըստ սեֆեր-բերլիկի օրենքի, զորակոչից խուսափողները ենթարկվում էին «իդամ»-ի (մահապատժի):

Եթե Թուրքիայում մահմեդականներն ի սկզբանե ենթակա էին զինվորական ծառայության, ապա քրիստոնյաները, այդ թվում եւ հայերը, մինչեւ 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը չէին զորակոչվում բանակ եւ դրա փոխարեն տալիս էին հատուկ զինվորական հարկ՝ «բեդել-ի -ասկերիե»՝ 20-40 դուրուշ գլխագին յուրաքանչյուր տղամարդու զինվորական ծառայության դիմաց:

Նման ձեւն այնքան էլ ձեռնտու չէր երիտթուրքերին, եւ նրանք 1910 թ. (ըստ Ա. Դարբինյանի՝ 1909 թ.)[10] հրապարակեցին «հնության փոշիներից դուրս հանված» զինվորական ծա-

---

1 **Լորդ Պրայս,** Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, կազմեց Վահան Միրզեենց, Կ. Պոլիս, 1920, էջ 103, Ա. Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն. Հուշեր 1890 էն 1940, Երեւան, 2003, էջ 153:

2 «Սեֆեր-բերլիկ» արաբերեն նշանակում է զորաժողով, զորահավաք, մոբիլիզացիա:

3 **Ռընէ Բինոն,** Հայերու բնաջնջումը. գերմանական մէթոդ-թրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 20:

4 **Լորդ Պրայս,** Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, էջ 103:

5 Հայկ Կոսոյեան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Երեւան, 1992, էջ 15:

6 **Ա. Դարբինեան,** անդ, էջ 153:

7 **Վեր. Ա.Ա. Կէօրկիզեան,** Անմոռանալի Յուշեր. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի զուլումի տարիներուն, Պեյրութ, 1967, էջ 7:

8 «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ. հունիսի 12, թիվ 24, էջ 768:

9 «Հայրենիք», Բոստոն, 1924 թ. ապրիլ, թիվ 6, էջ 89, նաեւ **Օն. Մխիթարեան,** Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 12:

10 Տեմ **Ա. Դարբինեան,** անդ, էջ 153:

ության մի նոր օրենք, ըստ որի հայերը եւս ենթակա էին զինակոչի, բայց կարող էին նաեւ «բեդել-ի»-ով ազատվել զինվորական ծառայությունից: Ըստ այդ օրենքի՝ զինվորական ծառայությունից կարող էին ազատվել 26 տարին լրացած բազմանդամ ընտանիքների երիտասարդները, եթե վճարեին 43 օսմանյան լիրա (ոսկի) գլխագին: Որոշումը գեղեցիկ էր: Մի կողմից հայերը կարող էին խույս տալ զինվորական ծառայությունից, իսկ մյուս կողմից պետական դատարկ գանձարանը կարող էր լցվել: Օրենքը վերաբերում էր բոլորին, բայց խիստ չարաշահվում էր հատկապես հայերի նկատմամբ:

Թուրքական իշխանությունները վարվում էին այնպես, ինչպես ուզում էին, եւ եթե անհրաժեշտ էր զինվորական ծառայությունից ազատված հայերը նորից ենթարկվում էին զորակոչի, այսինքն՝ հայերից եւ՛ զինվորական հարկ է վերցնում, եւ՛ բանակ զորակոչում: Այդ ձեւը, այս կամ այն չափով, կիրառվում էր եւ մինչեւ պատերազմը, բայց երբ այն սկսվեց, նման գործելակերպը դարձավ պարտադիր գրեթե բոլոր հայերի նկատմամբ[11]:

Արեւմտահայությունը, որը երբեք չէր ծառայել թուրքական բանակում, պահեստազոր գրեթե չուներ: Եթե ընդունենք, որ զորակոչի տարիքը սկսում էր 24 տարեկանից, ապա 20-24 տարեկան հայ երիտասարդները սեֆեր-բերլիկի հրամանի ժամանակ արդեն գործող բանակի մեջ էին: Իսկ 24 տարեկանից բարձր տարիք ունեցողները պահեստազոր էին համարվում, քանի որ տարիքային առումով անընդունակ էին զինավարժություններ կատարելու ավելի երիտասարդ զինակոչիկների հետ[12]: Նրանք իբրեւ ամրաշեներ մտնում էին «ամէլե» կոչված ջոկատների մեջ եւ աշխատում ճանապարհների կամ շինությունների վրա: Արդյունքում, թուրքական կառավարությունը «բռնի զէնքի տակ էր կանչում մարդկանց, որոնք երբէք զինուորական ծառայութեան մէջ չէին եղել եւ հրացան բռնելու վարժութիւններ չէին կատարել»[13]:

Սեֆեր-բերլիկի հրամանը խիստ էր եւ սպառնալից:

Ընդհանուր զորահավաքի հայտարարությունը ցնցեց Վանի թե՛ հայ եւ թե՛ թուրք ժողովուրդներին: Ժանդարմները եւ զինվորական խմբերը շրջելով գյուղից գյուղ, հրով ու սրով զինվորներ էին հավաքագրում: Ինչպես նաեւ Զավեն արքեպիսկոպոսն է նկատել. «Զորակոչի առթիւ գործադրուած խստութիւնները թուրք կառավարութեան ոգւոյն արտահայտութիւնը եւ որոշ նպատակ մը հետապնդելուն ապացոյցն էր» (խոսքը հետագայում հայ զինվորներին զինաթափ անելու եւ բնաջնջելու մասին էր - Ավ. Հ.)[14]:

Վանի կուսակալության մեջ կազմվեց Պատերազմական ատեան՝ հազարապետ Քյազիմ բեյի նախագահությամբ, որը Վանի սպայակույտի կողմից պաշտոնական հայտարարությամբ նահանգի բոլոր գավառ-գավառակները հայտարարեց պատերազմական վիճակի մեջ:

Պատերին փակցվեցին սեֆեր-բերլիկի սուլթանական իրադեի պատճենները եւ Վանի սպայակույտի 10 հոդվածներից կազմված հայտարարությունը[15]:

---

11 **Մ. Արզումանյան**, Հայաստան 1914-1917, Երեւան, 1971, էջ 313:

12 Թուրքիայում 45 տարեկաններն իրականում 50-55 տարեկան էին՝ իրական տարիքը թաքցնելու պատճառով:

13 **Ա-Դ-ռ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, Երեւան, 1917, էջ 64:

14 **Զաւէն արքեպս.**, Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներու վկայություններ, Գահիրէ, 1947, էջ 51:

15 **Հայկ Կոսոյեան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 3:

1915 թ. հուլիսի 22-ից թուրքական զորքն ու ոստիկանական խմբերը դիվային հրահանգներով ցրվեցին Վասպուրականի գյուղերը եւ սկսեցին զորակոչի հաշվառումը:

Բոլոր տղամարդիկ թողնում էին իրենց առօրյա գործերը եւ կուտակվում՝ հաշվառվելու նպատակով: Թուրքական պաշտոնյաները, առանց կանոնավոր ցուցակների՝ «ոչխարի հօտի պէս», հաշվառման էին ենթարկում բոլորին՝ չխնայելով ոչ ոքի, եւ հաշվի չառնելով ո՛չ ընտանեկան դրությունը, ո՛չ տարիքը, ո՛չ առողջական վիճակը, ո՛չ էլ մարմնական ու ֆիզիկական պակասությունները: «Ի նկատի չեն առնում ոչ ընտանեկան դրութիւնը, ոչ էլ մարմնական արատները ու թերութիւնները: Նոր կազմուած զնդերի մէջ դուք կը հանդիպէք կաղի, կոյրի, սապատաւորի, ցաւագարի ... մեծ ու փոքր, ծեր ու պատանի, քօռ ու քաչալ ... հաշմանդամ, մերկ ու թշուառ ...»[16]:

Հաշվառումից հետո, 1914 թ. հուլիսի 25-ին Վանի պատերազմական ատեանը զորակոչեց 20-45 տարեկան մարզված եւ ոչ մարզված զինվորներին:

Սակայն սկզբից եւեթ Վանում մեծ թվով հայ երիտասարդներ խույս տվեցին սեֆեր-բերլիկից եւ չներկայացան: Տեղական իշխանությունները դիմեցին բռնի միջոցների: Սեֆեր-բերլիկի 3-4-րդ օրը ժանդարմների մի խումբ հայտնվեց Արարուց թաղի հրապարակում, շուրջկալ կազմակերպեց եւ այնտեղ գտնվող բոլոր հայերին քշեց կառավարչատուն: Ճանապարհին հայերը դիմադրում են, եւ երկու կողմից փոխհրաձգություն է սկսվում: «Այս հանգամանքը,- գրում է Հ. Կոսոյանը,- ամենքէն աւելի տագնապի մատնեց հայ ժողովուրդը, որուն մէկ անգամէն կը պարտադրուէր զէնքի տակ գործօն ծառայութեան մտնել»[17]:

Կառավարությունը, հայերի համար այդ տեսակի անսպասելի եւ անախորժ զինվորագրությունը հաջողությամբ իրականացնելու համար, միաժամանակ դիմեց Վանի դաշնակցությանը եւ մանավանդ դաշնակցության ներկայացուցիչ՝ Արամի օժանդակությանը: Վերջինիս հորդորներով զորակոչի երկրորդ շաբաթվա ընթացքում, 350-400 երիտասարդներ, թե՛ քաղաքացի եւ թե՛ գյուղացի, որոնք մեծ մասամբ զինվորական տարիքի էին[18], թողնելով ամառային եռուն աշխատանքները, թուրքական նվագախմբի երաժշտության ուղեկցությամբ, երգերով ու պարերով, Այգեստանից շարժվեցին զինվորական պաշտոնատուն՝ զինվորագրվելու եւ «իրենց օսմանեան քաղաքացիական պարտք կատարելու...»:[19]

Այս առիթով կուսակալն իր շնորհակալությունը հայտնեց Արամին՝ ցույց տված վերաբերմունքի եւ անցանկալի մռայլ միջադեպը հարթելու համար:

Զորակոչը հաջողությամբ իրականացնելու գործում պակաս դեր չխաղաց նաեւ Վանի առաջնորդարանը, որի 1914թ. սեպտեմբերի 27-ի զեկուցագրում կարդում ենք. «Միեւնոյն ատեն, շրջաբերական գրութիւններով եւ յայտարարութիւններով, յորդորեցինք ժողովուրդը որպէսզի փութայ ամէն ոք պատասխանելու զօրակոչին, օրինաց տրամադրած պատիժներէն զերծ մնալու համար. նոյնպէս ալ յորդոր կարդացինք գիւղերու մէջ իրերօգնութեան խումբեր կազմել գիւղը մնացած մարդերէ եւ կիներէ, տղաներէ ու աղջիկներէ, ու գինուոր գնացողներու պակաս մնացած դաշտային աշխատութիւնները կատարել, ինչպէս նաեւ հա-

16 **Ա-Դ-ո,** Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, էջ 65, նաեւ Ջ. Դարյան, Արծիվ Վասպուրականի, էջ 251:

17 **Հայկ Կոսոյեան**, անդ, էջ 4-5:

18 **Լօրտ Պրայս,** Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, էջ 104:

19 ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 20, թ. 29, «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ. հունիսի 12, թ. 24:

ցով ու փողով օգնել իրարու. իսկ մեր առաջնորդական փոխանորդները գաւառաց մէջ այդ ուղղութեամբ աշխատիլ սկսած են արդէն՝ անձամբ գիւղերը ելլելով ու հսկելով, որով կը յուսանք թէ չարիքը փոքր ինչ կրնայ մեղմանալ»[20]:

Հայերի այս պատրաստակամությունը զարմացրեց զինվորական եւ քաղաքացիական կառավարական պաշտոնյաներին: Երախտիքի վկայությունն էր զորաբանակի 1914 օգոստոսի 24-ի հեռագիրն ուղղված Վանի կուսակալին, որտեղ մասնավորապես նշվում էր. «Գոհունակութիւն հաղորդել հայ ժողովրդին եւ ամէն անոնց, որոնք մրցումի մտածի նման, զոհողութիւն ցոյց տուին»[21]:

Հայերի գործելակերպը օրինակ ծառայեց թուրքերի եւ մանավանդ քրդերի համար, որոնք շատ դժկամությամբ էին զինվորագրվում: Դեռ ավելին, «Քրդութիւնը իր նախկին դրութեամբ սկսաւ ա՛լ աւելի զինուիլ միայն իր բնակավայրին մէջ. որեւէ կերպ կարծես զգալի չէր ըլլար անոր համար զօրաշարժը, եւ գուցէ նպաստաւոր ալ եղաւ, քանի որ Համիտիէ կազմակերպութիւններ իւրաքանչիւրը իր շրջանի մէջ կը մնային, ազատ սանձարձակ՝ զերծ զինուորական գործօն պարտաւորութենէ եւ կարգապահութենէ»[22]:

Վանի նահանգապետ, հայասիրական տրամադրություններով աչքի ընկնող Թահսին բեյը հայերի հուզումը մեղմացնելու համար, որոշ արհեստավորների՝ որպես պահեստազորային զինվորներ, պահեց քաղաքում՝ բանակի համար աշխատելու համար: Այդ առումով «թուրք կառավարութիւնը,- ըստ Լորդ Բրայսի, - հայերուն հետ շատ լայնամտութեամբ վարուեցաւ»[23]:

Թուրքական բանակի կարիքները հոգալու համար աշխատանքի անցան մեծ թվով հայ արհեստավորներ՝ հյուսներ, որմնադիրներ, դերձակներ, կոշկակարներ, երկաթագործներ, պղնձագործներ, ոսկերիչներ, կահագործներ, թիթեղագործներ: Տեղական իշխանությունները նրանց ձրի աշխատանքն օգտագործեցին Վանի 2 մզկիթների, քաղաքապետարանի, արհեստագիտական եւ թուրքական իգական դպրոցների, զինվորական հիվանդանոցի եւ Իթթիհատի ակումբի անավարտ շինարարությունների ժամանակ:

Դերձակների մեծ մասին՝ իրենց արհեստավորական սարքավորումներով եւ զինվորականների հսկողության ներքո, օգտագործեցին հագուստներ եւ սպիտակեղեն կարելու գործում, իսկ հայ բժիշկները եւ դեղագործները մտան զինվորական «Շարժուն» բանակի մեջ՝ թուրքական Կարմիր խաչի ներքո[24]: Դպրոցները չփակելու համար Թահսին բեյը զորակոչից ազատեց նաեւ հայ ուսուցիչներին[25]:

Չնայած կառավարությունը Վանի թուրք ուսուցչությանը զորակոչի էր ենթարկել, սակայն վանեցիներին սիրաշահելու քաղաքականությամբ, Թահսին բեյը ընդառաջեց Վանի առաջնորդարանի դիմումին եւ ժամանակավորապես զինվորական ծառայությունից ազա-

---

20 Ջաւէն արքեպս., անդ, էջ 53:

21 **Հայկ Գոսոյեան,** անդ, էջ 8:

22 Անդ, էջ 6:

23 **Լորդ Պրայս,**անդ, էջ 104:

24 **Հայկ Գոսոյեան,**անդ, էջ 5-6:

25 Արեւմտյան Հայաստանի մյուս շրջաններում ուսուցիչներն անխտիր զինվորագրվեցին: Ներքին գործերի նախարար Թալյաթն անտեսեց Ազգային կենտրոնական վարչության բոլոր դիմում-խնդրագրերը՝ ուսուցիչներին զինվորական ծառայությունից ազատելու մասին: Զինվորագրումից խուսափեցին միայն դպիրները՝ իբրեւ տիրաքոս (սարկավագ), որոնք սակայն հետագայում զորակոչվեցին եւ տարագրվեցին:

տեց 25 տարին լրացած լուսավորչական եւ բողոքական հայ ուսուցչությանը, նրանց համարելով քաղաքապահներ (ոստիկան-զինվորներ) եւ տալով նրանց «վէսիքաներ» (ազատության թուղթ)՝ պայմանով, որ շաբաթը երեք անգամ ներկայանան կառավարչատուն եւ հաշվառվեն: Այդպես շարունակեցին գործել Վանի եւ գյուղերի բոլոր ծիսական եւ ազգային մասնավոր վարժարանները եւ 150 ուսուցիչներ ստացան «վէսիքա»[26]:

Զինվորական ծառայությունից ժամանակավորապես ազատվեցին նաեւ Հայ Եկեղեցու սպասավորները[27]: Նման քաղաքականության արդյունքը եղավ այն, որ «… հայերը հրճուեցան եւ յուսադրուեցան եւ հայ փախստական զինուորները վերադառնալով իշխանութեանց յանձնուեցան»[28]:

Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, կառավարությունը հայերի հանդեպ ունեցած բարյացակամության կեղծ դիմակը քիչ-քիչ պատռեց: Նա շատ անգամ ցանկանում էր ուսուցիչներին բանակ կանչել՝ իբր թե կովկասյան կամ պարսկական սահմանագլուխ ուղարկելու համար, բայց կառավարությանը չէր հաջողվում այդ: Առաջնորդարանը կտրուկ հիշեցնում էր կառավարության ընդունած որոշումը, իսկ վերջինս էլ լռում էր առժամանակ՝ սպասելով հարմար առիթի:

Մեծահարուստներն էլ, ըստ ընդհանուր օրենքի՝ «բեդել-ի»-ով, ազատվեցին զինվորական ծառայությունից:

Ընդհանուր առմամբ Վանի վիլայեթի զինվորագրվածներից կազմվեց 20 թաբուրի (գումարտակ), որոնք համալրեցին կանոնավոր վաշտերի, սահմանապահ, ռազմա-ոստիկանական նորակազմ՝ «Սեյար» (Շարժուն կամ Շրջուն), «Սապրթ» (Հասպատուն) եւ ոստիկանական գնդերի կազմի մեջ: Խտրականություն ծագեց հատկապես հայ եւ թուրք զինվորների տեղաբաշխման ժամանակ: Թուրքերին տեղաբաշխում էին լավ՝ «Հասպատուն», իսկ հայերին՝ վատ՝ «Շարժուն» (Շրջուն) գնդերում, թուրքերին պահում էին մոտ վայրերում, իսկ հայերին քշում էին հեռու զորամասեր, թուրքերին զինում էին, իսկ հայերին ուղարկում էին խրամատներ փորելու եւ ճանապարհների վրա աշխատելու:

«Դարիք չը կայ հոգեբան լինել՝ ըմբռնելու համար այն սրտամաշ կացութիւնը, որ ստեղծուում էր հայ զինուորի համար,- գրում է Վանի զինակոչի աշխատանքներին մասնակցած Հ.Գալիկյանը,- տեսնելով թէ ինչպէս այն ժամանակ, երբ իրենց արհամարհելով քշում էին ցճանապարհների վրա, խրամատների մէջ կամ մթերքների կոյտերի մօտ ստորացուցիչ աշխատանքներ կատարելու, այդ նոյն ժամանակ տաճիկ, յաճախ տխմար քիւրդ զինուորը զէնքը ուսին խրոխտ ու հպարտ գալիս էր ու անցնում իբրեւ այդ երկրի տէրը»[29]:

Սկզբում զինվորագրվածներին աշխատեցնում էին քաղաքից դուրս՝ բլուրների լանջերին ամբողջ օրը խրամատներ փորելու համար: Հետագայում դրանք տեղավորվեցին Արճեշում, Բերկրիում, Աբաղայում, Խոշաբում եւ Բաշկալեում[30]: Ավելի ուշ, 1914թ. սեպտեմբերի 14-ին 11-րդ զորաբաժինը Վանից մեկնեց Կովկասյան սահման՝ Դութաղ[31], իսկ հետագա-

26 «Համբաւաբեր», Թիֆլիս 1916, հունիսի 12, թիվ 24, էջ 758:
27 «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 90:
28 **Լօրտ Պրայս**,անդ, էջ 104:
29 **Ա-Դ-ռ,** անդ, էջ 78:
30 Տեմ անդ, էջ 99:
31 Տեմ **Հայկ Կոսոյեան**, անդ, էջ 7:

յում, հաշվի առնելով, որ Վանը ռազմական կայան չէր, Վանի զինվորական ուժը՝ իր թնդանոթաձիգներով, հեծելազորով եւ հեպեւակով, ընդամենը՝ 11000 սվին, փոխադրվեց Էրզրում: Վանում մնացին միայն երկրապահ զինվորները, ժանդարմները, որոնց շուտով միացան նաեւ 2000 միլիսներ (ոստիկան)[32]:

Բանակ կանչված հայերը հիմնականում շարքայիններ էին եւ գտնվում էին անտանելի պայմաններում: Նրանք մեծ մասամբ աշխատում էին պաշտպանական ջոկատներում, օգտագործվում էին խրամատներ փորելու, ճանապարհներ եւ կամուրջներ կառուցելու, բեռներ տեղափոխելու աշխատանքներում[33]: Միաժամանակ, հայ բանակայինները սնվում ու ապրում էին անասելի վատ պայմաններում եւ ենթարկվում թուրքերի մշտական ծաղր ու ծանակին:

Այդ իրողությունը շատ պատկերավոր է ներկայացնում Օ. Մխիթարյանը. «Աւելի ծանր էր բանակի մէջ ապրող հայ զինուորի կացութիւնը: Խստրական ոգին զգալի էր ամէն մէկ քայլափոխին: Տարապայման ծառայութիւնը՝ հասցուած մինչեւ եգիպտական հին դարերը յիշեցնող սարկական վիճակը, ջարաշուք ծեծը, անողորմ բռնութիւնը եւ ամենափոքրիկ կասկածէ մը իսկ մահուան պատիժի գործադրումը՝ հայ զինուորի հանդէպ՝ անհուսափելի եւ բնական երեւոյթ էր: Սովորական էր նաեւ ամենօրեայ ծաղրի ու հայհոյանքի առարկայ դարձնել հայ զինուորի ցեղային պատիւը, լեզուն ու կրօնական հաւատալիքները: Ուտեստի, հագուստի եւ առհասարակ խնամքի կողմէ, բացարձակ խստրական ու թշնամական էր թուրք զինուորական իշխանութեան վերաբերումը դէպի հայ լռակեաց ու պարտաճանաչ զինուորը»[34]:

Այնուամենայինիվ, բանակ կանչված հայերը, ինչպես նախորդ երկու (Թուրք-իտալական եւ Բալկանյան) պատերազմներում, այս անգամ եւս, կատարում են իրենց քաղաքացիական պարտքը: Նրանց հայրենասիրության եւ ռազմունակության մասին անձամբ խոստովանում է ռազմական նախարար, հետագայում հայերի ջարդարար՝ Էնվեր փաշան:[35]

Ճիշտ է, հայ զինակոչիկների մեծ մասը, մանավանդ առաջին օրերին, մնում է զենքի տակ, բայց թուրքական կառավարությունը որոշում է նրանց ձեռքն այլեւս զենք չտալ, իսկ եղածն էլ աստիճանաբար զինաթափ անել: 1914 թ. նոյեմբեր ամսից հայ զինվորականները զինաթափ են արվում, իսկ նրանցից կազմվում են «ամէլե» (բանվորական) եւ «զրաաթ» (գյուղատնտեսական) «թաբուրի»-ներ (գումարտակ), որից հետո բոլորին էլ զինաթափում են ու ջարդում, թեեւ նրանք ավելի նվիրված էին կռվում, քան թուրքերը: Նկատենք, որ 1908 թվականի հեղաշրջումից հետո երիտթուրքերն իրենք որոշ տեղեր զենք էին տվել նաեւ հայերին, որպեսզի նրանք պաշտպանեին «սահմանադրական կարգերն» ընդդեմ աբդուլհամիդականների:

---

32 **Ա. Դարբինեան,** Հայ ազատագրական շարժման օրերէն. յուշեր 1890 էն 1940, էջ 155:

33 Դեռեւս խաղաղ տարիներին Արեւմտյան Հայաստանում ստեղծվել էր շալակավորների հատուկ դաս, որոնց օգնությամբ վաճառականներն իրենց ապրանքները տեղափոխում էին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք: Հատկապես հռչակված էին Վասպուրականի՝ Նորդուզի, Ճատախի, Մոկսի, Կարկառի, Կարճկանի շալակտարները: Նրանց մեջ կային մինչեւ 7 փութ բեռ տանողներ: Իսկ Թ-աղ ավանի բնակիչ Բրդանց Մարտոն յոթ փութ բեռ շալակած Պոլսից Վան էր հասել հինգ օրում եւ մի ոսկի ստացել Վանի քաղաքապետ Պետրոս Գափամաճյանից: Վանում այնքան հարկի էր շալակտարի արհեստը, որ տատմերները նորածնի պորտը կտրելիս ցածրաձայն բարեմաղթում էին – Ճալկտար էլնես, որդի… Ջ. Դարյան, Արծիվ Վասպուրականի, Երեւան, 1965, էջ 253:

34 **Զաւէն արքեպս.,** Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներեւ վկայություններ, էջ 55:

35 «Հայրենիք», Բոստոն, 1924թ. ապրիլ, թիվ 6, էջ 89:

Սեֆեր-բերլիկը, այդ «անիմաստ ու անմիտ ակտը», դարձավ բացահայտ աղետ արևմտահայության համար: Այն իր բոլոր տնտեսական եւ բարոյական հետեւանքներով գերազանցապես ծանրացավ թե՛ գյուղի եւ թե՛ քաղաքի հայ ժողովրդի ուսերին, եւ կյանքը կանգ առավ թե՛ քաղաքում, թե՛ գյուղում: Այն որպես պատուհաս եկավ քայքայելու թուրքահպատակ ժողովուրդների առանց այն էլ քայքայված տնտեսությունը, քանի որ այդ շրջանը ժողովրդի ամենածանր աշխատանքային՝ ապրուստ հայթայթելու ժամանակաշրջանն էր: «Այս եւ ընդհ. զօրահանութեան պատճառով,- նշվում է Վանի առաջնորդարանի 1914թ. սեպտեմբերի 27-ի տեղեկագրում,- երկրագործներու մեծագոյն մասը հեռացած ըլլալով, երկրագործական աշխատութիւնք մեծաւ մասամբ դադրած են, հնձոց արդիւնքը, որ այս տարի առատ էր, կարեւոր մասամբ փճացած է՝ չհնձուելով եւ հնձածներուն ալ դաշտը մնալովն ու չկալուելովը, իսկ յառաջիկայ տարուան համար սերմնացանութիւն շատ քիչ եղած է, որով այս տարի իսկ հացին գինը փոխանակ իջնելու, ինչպէս կը սպասուէր ներկայ առատութենէն, բարձրացած է, իսկ յառաջիկայ տարուան համար ահաւոր սով մը կը սպառնայ»[36]: Մարդիկ իրենց չարքաշ աշխատանքով հազիվ էին կարողանում «ձեռք բերել օրական մի կտոր չոր հաց՝ իրենց բազմանդամ ընտանիքի համար»:[37]

Սեֆեր-բերլիկը դժկամությամբ ընդունվեց հատկապես գյուղական շրջաններում: Մասնավորաբար, ծանր անդրադարձավ Արեւմտյան Հայաստանի գյուղական տնտեսության վրա, քանի որ այն երկրագործական երկիր էր, սկսել էր խոտհունձը, իսկ մոտ ժամանակներում սկսելու էր նաեւ հացահատիկների հունձը: «Խոտհարքերը հնձուոր էին ուզում, - նշում է Ա-Դոն, հասուն արտերը՝ գուրգուրող ու խնամող ձեռք, այն ինչ հնձուորն ու գիւղացին զօրանոցներն էին քշում»[38]:

1914 թ. հուլիս-սեպտեմբերին կատարված դաժան ու աննախընթաց զորահավաքի պատճառով չափազանց թուլացավ հայ ազգաբնակչությունը: Շատ տեղերում մնացին կանայք, երեխաները եւ ծերերը: «Զօրակոչից յետոյ հնարաւոր չէր սպասել տներում մնացած ազգաբնակչութիւնից ամենաթոյլ ընդդիմութիւն անգամ»[39]: Տղամարդկանցից դատարկված գյուղերում թուրք պաշտոնյաները գործում էին ազատ, համարձակ եւ բռնանում էին կանանց ու ծերունիների վրա:

Այդ էր պատճառը, որ սեֆեր-բերլիկը թուրքական իշխանությունների ձեռքին դարձավ «օրինական» միջոց ֆիզիկապես ու նյութապես հյուծելու հայերին՝ նրանց կողմից որեւէ պաշտպանություն եւ դիմադրություն բացառելով նախապատրաստելու նրանց լիակատար բնաջնջումը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս.Դ. Սազոնովին ուղղված Գեւորգ Ե Կաթողիկոսի 1915 թ. մայիսի 14-ի թիվ 834 նամակում նշվում էր, որ «Թուրք ոստիկանները Վանի վիլայեթում զորակոչի կամ իբր հասարակական աշխատանքների անվան տակ հավաքում են հայ տղամարդկանց եւ հայրենի վայրերից հեռու ենթարկում են գնդակահարության, իսկ կանանց եւ երեխաներին առեւանգում են»[40]: Ջենքի ընդունակներին

36 **Զաւէն արքեպս.**, անդ, էջ 52-53:

37 **Ա-Դո,** անդ, էջ 65:

38Անդ, էջ 64:

39 **Յովհ. աւ. քհ. Հաճեան,** Հայոց դաժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 353:

40 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918թթ.)» Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները. փաստաթղթերի ժողովածու, I հ., կազմող Լ. Բարսեղյան,

հավաքելուց եւ զանգվածաբար ոչնչացնելուց հետո դժվար չէր այլեւս գլուխ հանել անգեն գյուղերի ու քաղաքների մնացած բնակչության հետ: Իրավացի է Հ. Կոսոյանը, երբ նշում է, որ «Զօրաշարժի այս անբնականութիւնը միակ նպատակ մը ունէր՝ հայ օճախը զրկել արու եւ աշխատող ձեռքերէ, ձգել զայն ամէն կերպ զինուած եւ զինուորական կարգապահութիւններէ զերծ քրդութեան ճիրաններու մէջ»[41]:

Սակայն սեֆեր-բերլիկը միակ չարիքը չէր:

Սեֆեր-բերլիկին հաջորդում է մեկ այլ չարիք՝ **թեքեալիֆ-ի-հարբիեն**[42] պատերազմական կոչված տուրքերը՝ իր պահեստներով եւ «քօմիսիօն»-ներով, որը ժողովուրդն անվանեց **թեքալիում (առավ-փախավ)** եւ որը արտասովոր էր այլ երկրների համար:

Թեքեալիֆ-ի-հարբիեն գործադրվեց սեֆեր-բերլիկին գրեթե զուգահեռ: «Հայ երիտասարդութեան զինուորագրումին հետ,- գրում է Հ. Բարբին,- զինուորական գրաւումի պատրուակին տակ, սկսան ինչքերու յարքունիս գրաւումին, հայ վաճառականներու թալանին, արջառի գրաւումին, մէկ խօսքով փճացուցին առեւտրականը, արհեստաւորը եւ գիւղացին, որոնք, սակայն, պետութեան հանդէպ եւ բանակին մէջ ի գործ կը դնէին իրենց պարտականութիւնը...»[43]:

Այն մեծ աղետ էր հայերի համար, քանի որ գրեթե ամբողջ առեւտրական հրապարակը նրանց ձեռքին էր: Ո՞րտեղից պետք է հոգացվեր թուրքական 1 մլն. բանակի հագուստն ու սնունդը, երբ պետական գանձարանը, ինչպես միշտ, դատարկ էր:

Առանց հաշվի եւ փոխհատուցման, հատուկ հանձնաժողովների միջոցով, թուրքական բանակին պետք է տրամադրվեր ամեն ինչ՝ հացահատիկ՝ ցորեն, գարի, մթերքներ՝ ալյուր, յուղ, բրինձ, պանիր, ձավար, շաքար, կորկոտ, խոտ, հարդ, ինչպես նաեւ հագուստ, գուլպա, բաճկոնակ, ձեռնոց, տրեխ, կապերտ, թաղիք, կաշի, կտավ, կենցաղային իրեր՝ լամպ, թուղթ, ծրար, խեժ, նավթ, օճառ, կենդանիներ՝ ձի, էշ, եզ, ոչխար, ջորի, սայլ, կառք եւ բազմապիսի ապրանքներ: Իհարկե, այս պահանջը ձեւական բնույթ ուներ, քանի որ առանց տալու ամեն ինչ վերցվում էր բռնի ուժով եւ թալանով: Մտնում էին գյուղացու տունը, քաղաքացու խանութը, գործատունը կամ արհեստանոցը, բացում էին պահեստները եւ հորերը եւ ինչ որ գտնում էին՝ տանում էին: Միաժամանակ, գնահատում էին վերցված իրերը եւ ապրանքատիրոջը տալիս էին արժեքին (կամ արժեքի կեսին) համապատասխան ստացական, որի իրավական հիմքը թերի էր, քանի որ չէր մատնանշվում, թե ո՞վ տարավ, ո՞ւմ պիտի տալ եւ որտեղից պետք է ստանալ գանձված ապրանքի գումարը: Այդ ամենը ներկայացվում էր, որ «ատ ալ ալլահի գործն է»: «Վերցրած ապրանքի արժեքը,- ինչպես նկատում է Ա-Դոն,- վճարելու էր, բայց արժէքի փոխարէն տրւում էր մի թղթի կտոր, որը երբէք չէր վճարուելու»[44]: Իրականում գոյություն ուներ խառնաշփոթություն: Եթե թեքեալիֆ-ի-հարբիեն տուրք էր, ապա ինչո՞ւ էր բռնագրավված իրի համար ստացական տրվում: Իսկ եթե դրա դիմաց հետագայում դրամ պիտի վճարվեր, ապա ինչո՞ւ էր այն տուրք կոչվում:

Երեւան, 2011, էջ 16:

41 Հայկ Կոսոյեան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 15:

42 «Թեքեալիֆ-ի-հարբիե»-ն արաբերեն բառ է, որ նշանակում է պատերազմական տուրքեր:

43 **Հանոի Պաոպի,** Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ.Պոլիս, 1919, էջ 87:

44 **Ա-Դո,** Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, էջ 66:

Այս հարկատեսակը ծանրացած էր հիմնականում հայերի եւ հույների վրա եւ մասնավորապես Արեւմտյան Հայաստանի չարքաշ հայ գյուղացու վրա: «Բանակին պարէնաւորումին համար կատարուած գրաւումները Վանի մէջ,- նշում է Հ. Մորգենթաուն,- աւելի ծանրապէս քրիստոնեաներու ուսին վրայ ինկան, քան մահմեդական տարրերու, ճիշդ ինչպէս որ եղան Թիւրքիայի ուրիշ ամէն մասերուն մէջ: Հայերը պարտաւորեցան լուռ ականատեսներ ըլլալ որ՝ թիւրք սպաներ գրաւեն իրենց բոլոր արջառները, իրենց ամբողջ ցորենը, իրենց ամէն տեսակ ինչքերը, փոխարէն իրենց տալով միայն անարժէք թուղթի կտորներ»[45]:

Թեքեալիֆ-ի-հարբիեն տեղում գործադրելու համար Վանի պատերին փակցվեցին պատերազմական նոր տուրքերի բաժանման եւ գանձման մասին երեսփոխանական ժողովի եւ ծերակույտի կողմից ընդունված եւ սուլթանական իրադեով հաստատված օրենքը՝ սուլթանի, վարչապետ Սայիդ փաշայի, պատերազմական նախարար՝ Էնվերի, ելեւմտական նախարար՝ Ջավիդի եւ ներքին գործերի նախարար՝ Թալեաթի ստորագրություններով[46]:

Միաժամանակ հրապարակվեց Վանի կուսակալության հրամանը, որի համաձայն իրենց ապրանքները թաքցնողները, կամ «ապիկարություն» ցույց տվող պաշտոնյաները, պատժվում էին օրենքի խստությամբ եւ պաշտոնանկ էին արվում:

Վանում անմիջապես կազմվեց անհրաժեշտ պիտույքների ձեռքբերման զինվորական Հայթայթիչ մարմին, որն անմիջապես անցավ գործի:

1914 թ. հուլիսի 22-ին զինվորական պիտույքներ-նվերներ ստանալու անվան տակ պիտույքների Հայթայթիչ մարմնի կողմից «օրինական» թալանի մատնվեց Վանի շուկան, որը շարունակական դարձավ եւ կրկնվեց հետագա օրերին եւս: «Փակ խանութներն անգամ բռնի բացուեցան: Համալներով, կառքերով սկսեցին կրել, ամբարները կնքուեցան»[47]:

Պատերազմական տուրքը ժողովրդից գանձվում էր ամեն մեկի ունեցվածքի 1/10-ի չափով (ասենք՝ 10 ոչխարից մեկը), կամ ամեն տուն պետք է տար միջին հաշվով 12 ոսկու արժեքով մթերք: Բայց այդ առանց այն էլ ծանր տուրքը գանձվում էր ամենաայլանդակ կամայականություններով ու չարաշահումներով՝ «երեք անգամ աւելի այն քանակէն, զոր պարտաւոր էին վճարել»[48]: Այնպես որ, թեքյալիֆ-ի-հարբիեն աշխատավոր ժողովրդին թալանելու միջոց էր: Իհարկե, դրանից էլ ամենից շատ տուժեցին հայերը, որոնց թուրքական պաշտոնյաներն ու ոստիկանները կողոպտում էին անխնայորեն: «Ալ չմնաց վաճառական եւ փոքր խանութ մը, որ եռակի, հնգակի եւ աւելի չտար ապրանք»- նկատում է Հ. Կոսոյանը[49]:

Կուսակալության յուրաքանչյուր գավառակ, իբրեւ նպաստ, պետք է տար 200-ական թիթեղ կավուրմա եւ 250-ական օխա (25 փութ) յուղ, յուրաքանչյուր գյուղ՝ 10 ոչխար, ցորեն, գարի, հարդ եւ խոտ: Քաղաքի յուրաքանչյուր թաղամաս պետք է տրամադրեր 50 զույգ գուլպա, 50 զույգ ձեռնոց, 50 զույգ շապիկ-վարտիք, 50 բաճկոն, 5 թաղիք, 3 կապերտ, 7 մեզար (սփռոց):

---

45 «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», Կ.Պոլիս, 1915, էջ 244-245:

46 Տես **Հայկ Կոսոյեան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 3:

47 Տես անդ, էջ 4:

48 **Ռ-ընէ Բինոն**, անդ, էջ 20:

49 **Հայկ Կոսոյան,** անդ, էջ 14:

Յուրաքանչյուր տուն, որն ուներ կթան, շաբաթը երկու օր գինվորական հիվանդանոցին պետք է հատկացներ կաթ կամ մածուն, որի համար գլխավոր հրապարակների վրա դրված էին մեծ կաթսաներ[50]:

Բավական չէր, որ գյուղացու աշխատողին բանակ էին տարել, այժմ էլ տանում էին ընտանիքի ուտելիքը եւ նրան թողնում սոված: Այսպես, Ալջավազ գավառի 23 հայաբնակ գյուղերում ապրում էր 823 տուն հայ, որը պատերազմական հարկ էր վճարել 3800 քիլե հացահատիկ (մեկ քիլեն 15 փութ), 2300 ոչխար, 800 լիրա դրամ, մեծ քանակությամբ յուղ, պանիր, գուլպա, խոտ, հարդ եւ կենցաղային այլ իրեր, որի ընդհանուր արժեքն էր՝ 80000 ոսկի ռուբլի, որից յուրաքանչյուր տանը միջին հաշվով բաժին էր ընկնում 100 ոսկի ռուբլի, որը մեծ գումար էր եւ անհատական տնտեսությունների կարողությունից վեր[51]: Վանի մեջ, Քաղաքամիջում գտնվող՝ Ախթար-Բաղրք կոչվող թաղից, ուր ապրում էին 70 տուն հայեր, թեքեալիֆի-հարպիեն պահանջեց 50 հատ իշլիկ (ներքնաբաճկոն), 50 զույգ գուլպա, 50 զույգ ձեռնոց, 50 զույգ սպիտակեղեն, 50 զույգ շապիկ-վարտիք, 50 զույգ մեզար՝ ձավար-կորկոտ չորացնելու համար: Բացի այդ, պահանջեց ձիու փալաններ, բայց որովհետեւ փալաններ գտնելը քաղաքում դժվար էր, ուստի թաղը փալանի փոխարեն տվեց 5 թաղիք եւ 5 կապերտ: «Ի հարկէ, պահանջը սրանով չը սահմանափակուեց, այլ կրկնուեց երեք անգամ եւ երեք անգամն էլ ստացուեց: Նոյն ձեւի պահանջներ արուում էին բոլոր թաղերից»[52]:

Սակայն զավեշտականը դեռ մնում էր: Մի օր էլ կառավարությունը թաղերից պահանջեց մածուն, քանի որ զորքին ուտեստ չէր կարողանում հասցնել: «Մէկ մեծ կաթսա դրել էին թաղի կենդրոնում մի տան մէջ, իւրաքանչիւր տուն շաբաթը մի անգամ բերում էր իր ունեցած մածունը եւ այդ կերպ հաւաքած մածունը այդ տեղից էլ ուղարկում էր զօրանոցները»[53]:

Պատերազմի առաջին տարս ամիսներին Վանի նահանգի կողոպտված հայ գյուղերի վնասը կազմեց 200 հազար լիրա ոսկի: Բացի այդ, նույն Վանի կուսակալության հայ բնակչությունից խլվեց 90 հազար ոսկի գումարի հասնող ուտեստեղեն, կենդանիներ, ապրանքներ եւ այլն: 50 ոսկի արժողությամբ ապրանք էլ տվել էին առեւտրականները: Հայ բնակչությունից խլված ողջ գումարը, որը կազմում էր 340000 ոսկի, հինգ անգամ գերազանց էր Վանի ամբողջ կուսակալության համար նախատեսված ռազմական հարկի գումարից[54]:

Պատերազմական տուրքի գանձումն աղետ էր հատկապես քաղաքներում, ուր թուրքական պաշտոնյաները թալանում էին հայերի, այդ թվում նաեւ վաճառականների ունեցվածքը: 1914 թ. դեկտեմբերի 2-ին Կ.Պոլսի պատրիարքարանին ուղղված հեռագրում Վանի վաճառականները բողոքում էին, որ հակառակ կառավարության հրապարակած օրենքի, իրենցից բռնագրավել էին 20 հազար ոսկի արժողությամբ ապրանք՝ ապօրինաբար կողոպտելով պահեստները եւ չվճարելով եւ ոչ մի գումար «այս կերպով մոխիրի վրայ պիտի նըստին, պիտի սնանկանան ու չկրնան վճարել իրենց պարտքերը...»[55]:

---

50 Անդ, անդ, էջ 4:

51 **Ա-Դ-ո**, անդ, էջ 68:

52 Տե՛ս **Ա-Դ-ո**, , էջ 68:

53 Անդ, էջ 68:

54 ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 9-10, նաեւ **Ջ.Կիրակոսյան,** Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը 1914-1916թթ., Երեւան, 1965, էջ 257:

55 **Ջաւէն արքեպս.**, անդ, էջ 54:

Վանում տեղի ունեցած մի կողոպուտի մասին ժամանակի հայ մամուլը գրել է. «Ժողով կընեն ու կը որոշեն - այսինչը պիտի տայ սաչափ, այնինչը, սաչափ: Ու միշտ կորոշեն, որ հայ եւ յոյն վաճառականները պիտի տան: Ու հսկա օթոմօբիլ մը կուգայ հոգեառ հրեշտակի պէս կը կենայ մաղազայի առջեւ: Որ վաճառական զայն տեսաւ իր մաղազայի առջեւը կեցած, կը սարսափի, համոզուած, որ որոշած են զինքը սնանկացնել: Կը մտնեն խանութը, եղած չեղածը կը լեցնեն մոխրագոյն օթոմօբիլն ու կը տանեն, կտոր մը թուղթ տալով տիրոջը, թէ տարինք սաչափ լիրայի ապրանք: Գինն ալ կէսէն աւելի կը գեղչեն: Իսկ թուղթը որո՞ւ պիտի տալ եւ ո՞ւրկէ գանձել, ատ ալ ալլահի գործն է:

- Իպրանոսեաններ, Ասլանեաններ, Կարապետեաններ, Թոփալեաններ արժանացան հոգեառ օթոմօբիլի կրկնակի այցելութիւններուն: Մանաւանդ խեղճ Թոփալեանը, երեք անգամ օթոմօբիլն կեցաւ անոր մաղազայի առջեւը: Ու երէկ անոնց մաղազան գոց էր, վասնզի մէջը այլեւս ապրանք չկար, 250 ոսկիի կտրաւ, քաթան եւ այլն տարին միանուագ…»[56]:

Ժողովրդի համար կատարյալ աղետ էր նաեւ փոխադրական բոլոր միջոցների՝ սայլերի, եզների, գոմեշների, ձիերի, ջորիների ու էշերի հավաքագրումը: «Զինուոր հաւաքելու միեւնոյն խստութեամբ.- գրում է Զավեն արքեպիսկոպոսը,- սկսած են հաւաքել եզներ եւ սայլեր, իւրաքանչիւր գիւղէն եթէ չորս կամ վեց եզ պէտք էր, ժանտարմները ամէն մէկ գիւղէն 30-40 եզ կը բերէին, որպէսզի անոնց մէջէն լաւերը ընտրուէին եւ անպէտները ետ դրկուէին...»[57]: Քանի որ դա էլ չէր բավարարում, հայերին օգտագործում են նաեւ որպես գրաստներ եւ բեռնակիր-շալակատարներ: Նրանց հարկադրում էին տարվա բոլոր եղանակներին, այդ թվում ձմռան բքին, ամենատանջալից ձեւերով, իրենց մէջքերի վրա փոխադրել զանազան բեռներ ու ծանրություններ:

Այսպիսով, թեքեալիֆ-ի-հարբիեն սկիզբ դրեց արեւմտահայության «անվերջ, անյատակ ու անհաշիւ» տնտեսական քայքայմանը:

Զորակոչի եւ պատերազմական հարկերի քայքայիչ նշանակության մասին Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պետին ներկայացված 1916թ. փետրվարի 14-ի զեկուցագրում կարդում ենք. «Հայերը պարհակ էին կատարում, եւ՛ ծառայություն կրելով, եւ՛ բնամթերքով վճարելով ռազմական հարկը, ընդ որում բանակ էին զորակոչվում առանց բացառության 20-ից մինչեւ 45 տարեկան բոլոր տղամարդիկ, իսկ հարկը նրանք մուծում էին իրենց ունեցած պարենի ամբողջ պաշարի 1/3 չափով, ընդ որում, այդ 1/3-ը մի քանի անգամ էր վերցվել ամենակարճ ժամանակամիջոցում. բանն ավարտվում է նրանով, որ բնակչությունը կողոպտվում էր բառացիորեն մինչեւ վերջ: Քրիստոնյաներին զինվորական հարկման ենթարկելուց մեկ ամիս անց այդ նույն հարկմանը ենթարկվեց նաեւ երկրի ոչ քրիստոնյա բնակչությունը»[58]:

Թե՛ սեֆեր-բերլիկը եւ թե՛ թեքեալիֆ-ի-հարբիեն անողոք էին, իսկ դրանց կարգադրությունը հայերը համարում էին անիրավացի, քանի որ շատ տեղերում աշխատող ձեռքեր բոլորովին չէին մնում: Ոմանք էլ, ելնելով իրենց ընտանիքների տնտեսական վատթար եւ

56 **Ա-Դ-ո,** անդ, էջ 66-67, նաեւ Զ. Դարյան, անդ, էջ 252:

57 **Զաւէն արքեպս.,** անդ, էջ 55:

58 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918թթ.). Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները», էջ 36:

անապահով վիճակից, խուսափում են զինվորական ծառայությունից եւ որոշում են գաղթել ու հեռանալ հայրենիքից[59]: Այդ պատճառով, նրանք մի քանի տեղերում սկսեցին խուսափել զինվորական ծառայությունից, «որը հանդիսանում էր բնական հետեւանք օրէնք խախտող անարդար կարգադրութեան»[60]:

Անհավասար, խտրական եւ նվաստացուցիչ պայմաններում գտնվող հայ զինվորն իրավունք ուներ դասալքության դիմելու: «Սկսուած զօրահանութիւնը,- նշվում է Վանի առաջնորդարանի 1914թ. սեպտեմբերի 27-ի տեղեկագրում,- բնական էր, որ խրտչեցնէր շատերը, մանաւանդ Հայերու պէս զինուորական կեանքի իսպառ անվարժ ժողովուրդը, ուստի բնական էր, որ ամէնքը անմիջապէս չպատասխանեցին զօրակոչին կամ զինուորագրուելէն յետոյ դասալիքներ գտնուէին»:[61] Ուստի, շատերը քաշվում էին ասպարեզից, խուսափում զինվորական ծառայությունից եւ թաքնվում: Խույս էին տալիս ոչ միայն քրիստոնյաները, այլեւ մահմեդականները:

Դասալքությունը սկսվեց գլխավորապես ճանապարհների եւ խրամատների վրա աշխատողների շարքերում, ուր հայ զինվորը ֆիզիկական զրկանքների հետ միաժամանակ, կրում էր նաեւ բարոյական զրկանքներ:

Այդուհանդերձ, զենք կրող հայ զինվորները, մինչեւ ռուս-թուրքական պատերազմը, շատ քիչ դասալիքներ տվեցին:

Այդ ամենի հիման վրա իշխանություններն առաջ քաշեցին **դասալքության** մասին շինծու հարցը:

Դասալքության ծրագիրը կենսագործելու պատեհ առիթ հանդիսացավ ռուսական զորամասի մուտքը սահմանամերձ Սարայ գյուղաքաղաք, իսկ այնուհետեւ թուրքական բանակի պարտությունը Սարիղամիշի եւ Քյոփրի-քյոյի մոտ՝ 1914թ. նոյեմբերին: Բնականաբար, գտնվեցին դասալիքներ: Զինվորները «ամբողջ խմբերով սկսեցին փախչել գործող բանակներից ու պահեստից եւ թաքնուել լեռներում ու գիւղերում»: Հակառակ ջիհադին «փախչում էին թէ՛ հայերը, թէ՛ քրդերը, թէ՛ թուրքերը, բայց տոկոսային յարաբերութեամբ՝ հինգ փախչող թուրքին՝ մի հայ հազիվ էր ընկնում»: Իսկ այն տեղերում, որտեղ բանակում հայերը շատ չնչին տոկոս էին կազմում, «փախչողները բացառապէս թուրքերն էին լինում եւ մեծ չափով»[62]: Իսկ «քիւրդ դասալիքները խմբերով կը վիտպային լեռնային գաւառները»[63]:

Մատների վրա կարելի էր հաշվել այն հայերին, որոնք զենք վերցնելով անցել էին ռուսական բանակի կողմը[64]: Այնուամենայնիվ, «տաճիկները պարտության ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա…»[65]:

---

59 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1914, մայիսի 18, թիվ 106:

60 **Ա-Դ-ո,** անդ, էջ 70:

61 **Զաւէն արքեպս.,** անդ, էջ 52:

62 **Արամայիս,** Զարհուրելի ոճիրը. Մուշ-Սասուն. բեկորներ իմ յուշերից – Վան-Նիկոլը-Կարսն ու Մարմն, Բազու, 1916, էջ 1-2:

63 **Հայկ Կոսոյեան,** անդ, էջ 15:

64 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թթ. 27-34:

65 **Ա-Դ-ո,** անդ, էջ 86:

Այն, որ հայ դասալիքների թիվը շատ փոքր էր, վկայում են նույնիսկ Ռ. Բինոնը[66], Հ. Բարբին[67], Լ. Բրայսը[68] եւ Հ. Մորգենթաուն[69]:

Ամեն անգամ դասալքության հարցը քաղաքական, քարոզչական նպատակով օգտագործվում էր հայերի եւ ոչ թե դեպի թիկունք փախած թուրքական զինվորների դեմ, որոնք զբաղվում էին զանգվածային կողոպուտով եւ սպանություններով:

Բանն այն է, որ Կովկասյան ճակատում թուրքական զորքերի ձախողությունների պատասխանատվության մեծագույն մասը վերագրվում էր քրիստոնյաներին եւ մասնավորապես հայերին: Այն իրողությունը, որ ռուսական ուժերի մի մասը կազմված էր հայերից, թուրքերին անգուսպ զայրույթ էր պատճառում: Սակայն, եթե նկատենք, որ աշխարհի հայերի մոտավորապես կեսն այդ ժամանակահատվածում, բնակվում էր Կովկասի ռուսական նահանգներում եւ որ նրանք՝ բոլորը ռուսների նման ենթակա էին զինվորական ծառայության, «անկասկած տրտունջի օրինավոր պատճառ չէր դառնար», քանի որ «այս հայ զինուորագիրները Զարին հաւատարիմ (bona fide) հպատակներ էին»[70]:

Մինչդեռ թուրքերը հավատում էին, որ Վանի, հայկական նահանգների հայ զինվորներից շատերը դասալիք էին դարձել, անցել էին սահմանագիծը, միացել էին ռուսական բանակին եւ ճանապարհներին ու ընդհանրապես երկրին իրենց ծանոթությունները կարեւոր ազդակ էին հանդիսացել ռուսական հաղթանակների համար: Չմոռանանք նաեւ, որ պատերազմի սկզբում, իթթիհատական գործիչները Կարինում եւ Վանում կոչ էին անում հայ քաղաքական ղեկավարներին, տեղափոխվել Արեւելյան Հայաստան եւ այնտեղ ռուսական կառավարության դեմ «յեղափոխութիւն յարուցանելու փորձ կատարել»: Եւ քանի որ արեւմտահայերը մերժեցին այդ առաջարկը, այն ավելի սաստկացրեց տիրող լարվածությունը: «Թ-իրք Կառավարութիւնը չափազանցեց Վանի Հայերուն «դաւաճանական» ընթացքը եւ մինչեւ իսկ զայն իբր չքմեղանք ծառայեցուց ամբողջ ցեղին հանդէպ իր վարմունքին»[71]: Օրինակ, Բաշկալեի եւ Սարայի շրջաններում ռուսական բանակի կողմն անցած հայ զինվորների թիվը հարյուրից չէր անցնում, բայց սրի քաշվեցին մի շարք գյուղերի հայ բնակիչները:

Օսմանյան խորհրդարանի Վանի երեսփոխան Ա. Վռամյանի կողմից Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալյաթին հղված 1915 թ. փետրվարի 14-ի ծածկագիր հեռագրի մեջ ապացուցվում էր, որ ռուսական բանակի մեջ պատերազմից առաջ Ռուսաստան անցած արեւմտահայերից ընդամենը 1000 մարդ կար, որից 200-300-ը՝ Վանից փախածներն էին:[72] Դրանք մասն էին կազմում այն 20000 արեւմտահայերի, որոնք պատերազմից շատ առաջ, կոտորածներից խույս տալու նպատակով, ապաստանել էին Կովկասում եւ չէին կարողացել վերադառնալ իրենց հայրենի օջախը՝ նրանց նկատմամբ սահմանադրական Թուրքիայի վարիչների բացարձակ թշնամական վերաբերմունքի հետեւանքով: «Դաւաճան որակուածների թիւը այնքան ճոճիմ էր,- գրում է Ս. Ակունին, որ որեւէ պարագայի տակ, հաւաքական

66 **Ռ-ընէ Բինոն**, անդ, էջ 20:
67 **Հանոի Պաոպի**, անդ, էջ 87:
68 **Լորդ Պրայս**, անդ, էջ 104-105:
69 «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», էջ 246:
70 Անդ, էջ 245:
71 Անդ, էջ 245:
72 **Զաւէն արքեպս.**, անդ, էջ 69:

պատասխանատուութիւն մը չէր կրնար հրաւիրել երկու միլիոն Թուրքիոյ հայերու վրայ»:[73]

Սակայն, այդ ամենը կանխամտածված դրսեւորում չէր, այլ պատահական ու անհատական: Հայ ղեկավար շրջանները ոչ միայն չէին խրախուսում այդ երեւոյթը, այլեւ արեւմտահայերին թելադրում էին քաղաքացիական պարտքի անշեղ կատարում:

Հայերի ղեկավար կազմը՝ առաջնորդներն ու դաշնակցական կոմիտեները, որոնք 1914թ. ընդհանուր ժողով էին գումարել Էրզրումում եւ քննության առնելով իրավիճակը գտել էին, որ պետք է հարազատորեն կատարել «այլասերման» հասած քաղաքացիական պարտքը հայրենիքի ու կառավարության հանդեպ եւ խրախուսում էին ժողովրդին՝ առանց դժգոհելու տալ հարկեր ու զորակոչիկներ:

Իրենց հերթին պատրիարքը, Ա. Վռամյանը եւ ուրիշներ կոչ էին անում արեւմտահայերին լինել շրջահայաց եւ զգույշ օժանդակել, հավատարիմ մնալ եւ ենթարկվել թուրքական պետությանը «չինայէ մինչեւ իսկ իր կեանքը, եթէ հայրենիքը պէտք ունի անոր»:[74] Վանից եւ Էրզրումից ստացված պատասխան գրություններում հաստատում էին նրանց ցանկությունը: Վանի առաջնորդարանից ուղարկված պատասխան հեռագրում մասնավորապես նշվում էր. «Հեռագիրնիդ ստացանք, ձեր հրահանգին համաձայն պէտք եղած յորդորները կարդացինք: Վանայ Հայուն մեր սիրեցեալ հայրենիքին հանդեպ ունեցած հաւատարմութիւնը եւ ըրած զոհողութիւնները հնուց ի վեր ապացուցուած են: Ջօրակոչին եւ ներկայ պատերազմի ընթացքին եւս արդեն օսմ. զահուն յարգանքին եւ պարծանքին բարձրացմանը նիւթապէս, բարոյապէս եւ անձով ամեն տեսակ զոհողութիւններ ընելու վրայ ենք եւ ասկէ ետք ալ նոյն զոհողութիւններու պատրաստ ենք»[75]:

Վանի եւ շրջանի հայությունը բնավ ապստամբելու նպատակ չի ունեցել եւ ոչ էլ առանձին պատրաստություն էր տեսել: Բանն այն է, որ Վանում տարիներ շարունակ գործունեություն ծավալած եւ, առաջին հայացքից, իրենցից կազմակերպված ուժ ներկայացնող հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես՝ դաշնակցության տեղական կազմակերպությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու եւ ոչ մի գործնական մտադրություն չունեին:

Դաշնակցական ղեկավար գործիչների խոստովանությամբ, պատերազմի նախօրյակին «Վանէն մինչեւ Կիլիկիա» ապստամբական «հոգեբանութիւնը գոյութիւն չունէր, այսպիսի ծրագիր մը գծուած չէր: Հայութիւնն ու Հ.Յ. Դաշնակցութիւնն այսպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստուած չէին: Երկուութիւնը եւ տատանումը մնացին իրենց ուժին մէջ»[76]:

Իթթիհատ-դաշնակցական համագործակցությունը, որ սահմանադրությունից ի վեր շարունակվում էր մինչեւ պատերազմի նախօրյակը, ամլացրել էր այդ կուսակցությունը եւ նրան դարձրել նախաձեռնությունից զուրկ, հասունացող իրադարձությունների ետեւից ընթացող մարդկանց խումբ: Ավելին, Վասպուրականի ամբողջ հայությունը՝ Օսմանյան

73 **Ս. Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1920, էջ 17:

74 Անդ, էջ 16:

75 **Ս. Ակունի**, անդ, էջ 17, հմմտ. «Վասպուրական, Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեհինգամեակին առթիւ, 1915-1930», Վենետիկ, 1930, էջ 21:

76 **Կ. Սասունի**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայ գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 25-26:

խորհրդարանի անդամ, հայտնի դաշնակցական Ա. Վռամյանի գլխավորությամբ, ոչ միայն դեմ էին ամենափոքր շարժում հրահրելուն, այլեւ «առանձին խոհեմութեամբ եւ հեռատեսութեամբ» գաղտնի պատվիրակներ էին ուղարկում Ս. Էջմիածին եւ Թիֆլիս՝ Հայոց Կաթողիկոսի եւ Ազգային բյուրոյի ներկայացուցիչների մոտ, որպեսզի վերջ տան կամավորական շարժմանը եւ «վերապահ ու խոհեմ ընթացք բռնեն եւ չգրգռեն ոճրագործ իթթիհադական կառավարութեան»[77]:

Ռուսական բանակի հարձակման հաջողության ժամանակ նույնպես, Վանի հայկական հասարակական-քաղաքական ղեկավարների շրջանում հիմնականում իշխում էր թուրքական կառավարության հետ կապերը չխզելու, նրա դեմ ըմբոստացում թույլ չտալու տեսակետը, քանի դեռ ռուսական զորքերը չէին գրավել այդ վայրերը: «... Թէեւ մթնոլորտը լեցուած էր խռովութիւններու կանխանշաններով,- նկատում է Հ.Մորգենթաուն, - բայց Հայերը ինքնազսպողութեան հիանալի ընթացքով շարժեցան... Հայ կղերը եւ քաղաքական պետերը... ժողովրդին մէջ մտան, նախազգուշացնելով հանդարտութիւն պահել, համբերատարօրէն հանդուրժել ամէն անարգանմիեւ նոյն իսկ ծայրայեղութիւններու, ատով չտալու համար Թիւրքերուն այն առիթը՝ զոր կը փնտռէին… Եթէ նոյն իսկ անոնք մեր մէկ քանի գիւղերը կրակի տան, կ՛ըսէին այդ պետերը, փոխվրէժի մի՛ դիմէք, որովհետեւ աւելի լաւ է որ՝ մէկ քանի գիւղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորուի»[78]:

Երբ ռուսական բանակը, իր կազմում ունենալով Անդրանիկի խումբը, պատերազմի սկզբին գրավեց թուրք-պարսկական սահմանագլխի վրա՝ Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, Վանում թուրքական իշխանությունները խուճապի մատնվեցին եւ պատրաստվեցին տեղափոխվել Բիթլիս: Այդ օրերին Վանում թուրքական ռազմական ուժ չկար, եթե չհաշվենք չորս հարյուրի հասնող ոստիկաններին եւ, ինչպես Արմենակ Եկարյանն է վկայում՝ «Մերիները կրնային ամեն բան ընել անարգել»[79]: Սակայն,- շարունակում է Ա. Եկարյանը,- «Մեր վրա պարտականություն կծանրանար զգույշ կենալը, եթե քաղաքի մեջ եւ մերձակայքը մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գյուղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանության ամեն միջոցէ, կղզիացած շատ տեղ, քրդական ծովու մէջ»:[80]

Այսպիսով, չնայած բոլոր դժվարություններին, հայերը կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը եւ փորձում էին խուսափել անախորժություններից ու աղետներից:

Այդուհանդերձ, կառավարությունը խստորեն հետապնդում էր հայ «դասալիքներ»-ին՝ կազմակերպելով շուրջկալներ եւ խուզարկություններ: Գյուղերում այդ գործը կատարում էին թուրք ոստիկան-զինվորները, իսկ քաղաքում կառավարությունը հաշիվ էր պահանջում Հայոց առաջնորդարանից, Օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանից եւ Հ.Յ.Դ. Վանի ներկայացուցիչ Արամից: Ա. Վռամյանը Թալեաթին ուղղված 1915թ. փետրվարի 14-ի վերոհիշյալ ծածկագիր հեռագրում դասալքության համար առաջ էր քաշում երեք պատճառ՝ ա) 24 տարեկանից բարձր տարիք ունեցողների մարզված չլինելը, բ) 24 տարեկանից ցածր

77 **Հովհ. ավ. քհ. Հաճյան**, Հայոց պաժանքի ճամբաներով, Ա հատոր, էջ 374-375:

78 «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», էջ 246:

79 «Ա. Եկարյանի յուշերը», Գահիրե, 1947, էջ 186:

80 «Ա. Եկարյանի յուշերը», էջ 186:

տարիք ունեցողները չէին կարող դիմանալ ռազմական ծանր զրկանքներին եւ գ) բանակում հայ զինվորների կրոնական խնդիրների անտեսումը եւ արհամարհանքը:

Նա միաժամանակ, հիմնավորվում էր դասալքության քաղաքական եւ կրոնական շարժառիթները եւ մասնավորապես նշում. «Հայ դասալիքներու թիվը շատ սահմանափակ էր սկիզբները եւ անհնար չէր այդ անուշան տոկոսն ալ անհետացնել տակաւ... հայ ժողովուրդի գոյութեան իսկ սպառնացող կազմակերպուած բնոյթ ունեցող կարգ մը դէպքեր, ճիհատի հռչակումը եւ անոր միակողմանի ըմբռնումը՝ եկան դասալքումի երեւոյթին տալու քաղաքական չարաշուք գոյն մը:

Ահա թէ ինչպէս.- Այդ նոր պատճառներն են

Ա. Հայ զինուորներու եւ հայ ժանդարմներու զինաթափումը, որ անմիջապէս քաղաքական անվստահութեան հեղձուցիչ մթնոլորտ մը ստեղծեց հայերու շուրջ ու նպաստեց լարելու միջցեղային յարաբերութիւնները հայուն եւ իսլամին միջեւ:

Բ. Զինաթափ եղած հայ զինուորներուն գրաստի դեր մը տրուեցաւ, որ գերազանցապէս վիրաւորեց անոնց մարդկային եւ ազգային ինքնասիրութիւնը, միանգամայն ստորնացնելով զանոնք իրենց իսլամ հայրենակիցներու աչքին:

Գ. Զինաթափ եղած այդ հայերը, գտնուելով իսլամ զինուորներու հսկողութեան տակ, կամ հարկադրուած ըլլալով անգէն շրջելու արդէն գրգռուած եւ սպառազէն իսլամներու մէջ - անոնց կեանքը վտանգի ենթարկուեցաւ:

Հասարակութեան մէջ յամառօրէն կը շրջին շշուկներ հարիւրաւոր գնդակահար, ջրախեղդ կամ դաշունահարեւած ու անհետ կորսըւած հայ զինուորներու մասին, մասնաւորապէս Կարնոյ եւ Իրանի ռազմադաշտին մէջ կամ քովերը:

Դ. Զինաթափ եղած հայ զինուորներու այլեւայլ պատրուակով հեռացումն իրենց գաւառներէն դէպի անծանօթ վայրեր:

Ե. Բոլոր իսլամներու, յատկապէս քիւրտերու, անիտիր զինումը 16-60 տարեկան՝ միլիսի պատրուակին տակ: Անոնց յանձնուեցաւ ոստիկանական, ժանդարմական պաշտօններ, որ հայութեան հանդէպ տիրապետող եւ զսպիչ ուժի մը հանգամանքը տուաւ անոնց:

Զ. Միլիսներու շահատակութիւնը հայ գիւղերու մէջ: Այսպէս, Ալիւր, Խաւենց , Ամիկ գիւղերու դէպքերը Թիմարի միլիսներու կողմէ: Կարճկանի, Բէլու, Նանիկանց, Ընձաք, Եղեգիս գիւղերու մէջ կատարուած բռնութիւններն ու սպանութիւնները Բաղէշի միլիսի եւ չէրքէզ սպայի ջոկատին ձեռքով: Մխկներ գիւղի բռնաբարուածները Էօմէր աղայի միլիսներու կողմէ, Բշարէ-Զաթօի 600 հոգինոց խումբը Պարսկաստան երթալու ատեն, Մանազկերտի եւ վերջերս Վանի նահանգի հիւսիսային արեւելեան գիւղերուն մէջ: Քիւրտ կամաւորներու աւերները Մշոյ դաշտին մէջ, որուն առժամեայ վերջ մը տրուեցաւ գերմանական հիւպատոսի դիտողութիւններուն վրայ եւ, վերջապէս, քիւրտերուն ձեռքով Սլիվանի (Տիգրանակերտ) 12 հայ գիւղերու կողոպտումը:

Է. Ծանօթ քիւրտ ոճրագործներու ներումն ու զինումը եւ անոնց մնալը իրենց գիւղերու կամ հայաբնակ շրջաններուն մէջ: Այսպէս, օրինակ, Մէհմէտ Էմին, Մուսա եւ Գասըմ պէյերու այլ շատ շատեր:

Ը. Քիւրտերու մեծ քանակով եւ զինեալ փախուստը բանակէն: Այսօր Վանի եւ Բաղէշի կուսակալութեանց լեռնային գաւառները լեցուած են այդ դասալիքներով:

Թ. Համիտիէներու մնալը հայաբնակ գաւառներու մէջ եւ անոնց կապարած աւերն ու կոդոպուտը , ինչպէս Հասան-Թամբանի, Ամոռիկի, Պօղազքէսէնի, Հազարայի, Մանտրանի թալանը, Պզտիկ գիւղի կողոպտումը Սատրմ բէկի ջոկատին կողմէ, եւ այլն:

Ժ. Վերջապէս Պաշգալէի եւ շրջակայ հայ գիւղերու, ինչպէս նաեւ Ամոռիկի եւ Ազարիկի, Հասան-Թամբանի, Հազարէնի եւ Դաշ-Օղլուի ջարդերը, որոնք իրականութիւններ են, հակառակ պաշտօնական ամէն հերքումներուն:

Վերջին տասը պատճառները առաջ կը մղեն գերազանցապէս կարեւոր խնդիր մը՝ պատուի, ինչմիեւ կեանքի ապահովութիւնը Յեղի մը, որուն հանդէպ անվստահութիւն մը հոչակուած է այսօր պաշտօնապէս, ասպիճան մը եւս ծանրացնելով արդէն իսկ անոր փափուկ կացութիւնը՝ իր դրացի քիւրտ տարրերուն հանդէպ:

Կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութեան խնդիրը, որեւէ նկատումէ վեր, գերազանցապէս բնական ու նուիրական իրաւունք մը համարելով, բանականութեան, խղճի եւ առողջ քաղաքականութեան հակառակ գործած պիտի ըլլայ կառավարութիւնը, եթէ ստիպէ հայը մտնել անգէն ծառայութեան մէջ՝ որ վտանգ կը սպառնայ իր կեանքին, առանց որեւէ օգուտի մը ընդհանուր հայրենիքին համար: Մինչ միեւնոյն ատեն իր անպաշտպան ընտանիքը ամէն վայրկեան ենթակայ է իր գինեալ ու կիսավայրենի դրացիներու արիւնոտ քմահաճոյքներուն:

Ու երբ այսօր Ճիհատի կոչին կ՚անսասդեն բուն իսկ իսլամները, փախուստ տալով պատերազմի դաշտէն, անիրաւութիւն մը եւ անարդարութիւն մըն է դասալիք անունը տալ հայ զինուորին, որուն կը զլացուի էական ըստորոգելիքը իր պարտականութեան, որ զէնքն է:

Ուստի, նկատելով հայերու դասալքումի ընկերային, կրօնական եւ քաղաքական բազմաթիւ ու շատ յարգելի պատճառները, զորս բացատրեցի վերեւ. նկատելով իրենց արու անդամներէն ամայացած եւ անպաշտպան հայ օճախներուն սպառնացող վտանգը , որուն սկզբնաւորութիւնը արդէն տեսանք ինչպէս Վանի, նոյնպէս Բաղէշի, Կարնոյ եւ Տիգրանակերտի կուսակալութեանց մէջ. նկատելով, որ հազարաւոր անգէն հայեր բանակին զգալի օգուտ մը չբերելէն զատ, երկիրը պիտի զրկեն աշխատաւոր բազուկներէ, առանց որոց անհնարին պիտի ըլլայ առաջիկայ գարնան վարուցանքը, որուն տնտեսական ահաւոր հետեւանքները դժուար չէ այժմէն իսկ նախատեսել. նկատելով որ դասալիքներու խնդիրը , եթէ ի մօտոյ չի լուծուի, երկիրը պիտի զտնէ ինքզինքը ահաւոր չարիքի մը՝ մեծ չափերով աւազակութեան մը՝ առջեւ, որովհետեւ բնական է թէ անօթութենէ եւ թէ օրէնքէն հետապնդուած մարդիկ կամայ ակամայ աւազակութեան մէջ փնտռեն միջոցը իրենց կեանքը գնդակէն փրկելու եւ կտոր մը հաց ճարելու»[81]:

Միաժամանակ, Ա. Վռամյանն առաջարկում էր՝ ա) զենքի տակ զինվորական ծառայության մեջ պահել այն հայերին, որոնք զինվորական պատրաստվածություն էին ստացել 1910-1914 թթ. բ) հայ զինվորներին իրենց գավառներում օգտագործել ժանդարմների պաշտոնում եւ գ) 24 տարեկանից ցածր՝ զինվորական ծառայության չհասած զինակոչիկներին ազատել բանակիձեւ նրանցից վերցնել միայն չափավոր փրկանք[82]:

---

81 ՀԱԱ, ֆ. 227, գ. 416, թ. 54-58, նաեւ «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 98-100, նաեւ **Օն. Մխիթարեան,** Վանի հերոսամարտը, էջ 28-34:

82 «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 98-101:

Սակայն նրա հեռագիրը մնաց անպատասխան:

Հեպազայում, բոլոր դասալիքներն էլ բռնվում են, հայերին անմիջապես գնդակահարում, իսկ թուրքերին ազատ են արձակում, թեեւ փախուստի առիթը տվել էին թուրքերը: Քրդերն ուղղակի զինվորական ճամբարներում են կոտորում հայ զինվորներին: Դրանով էլ սկսվում են հայ զինվորների անհատական եւ խմբակային սպանությունները՝ Օսմանյան կայսրության խուլ անկյուններում[83]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական կառավարությունը հայերին եւս հարկադրեց նետվել պատերազմի հորձանուտը: Վան-Վասպուրականի հայությունը, հետեւելով իր ավանդական օրինապահ քաղաքականությանը, բարյացակամ վերաբերմունք ցույց տվեց թուրքական կառավարությանը: Նա մի կողմից իր զավակներով ստվարացրեց թուրքական բանակի շարքերը, իսկ մյուս կողմից Վանի մեծ ու հռչակավոր շուկան եւ հայ գյուղացիները միլիոնավոր օսմանյան լիրաների ապրանքներ, ուտելիք եւ հագուստ մատակարարեցին թուրքական զորքերին:

83 Ընդհանուր առմամբ Մեծ Եղեռնի տարիներին ոչնչացվեց ավելի քան 60 հազ. հայ զինվոր, տե՛ս **Ա. Համբարյան, Ստ. Ստեփանյան,** Հայոց ցեղասպանությունը, Երեւան, 1995, էջ 15: